



**ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝
ՀՖՖ ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2006/2007թթ.
ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

ք.Երևան

28.11.2005թ.

Տիկնայք եւ պարոնայք

Այս հայտարարությամբ սկսվում են ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի նոր՝ 2006/2007թթ. մրցաշրջանի աշխատանքները: Այն իրավունք կընձեռի մեր ակումբներին մասնակցել ՈԻԵՖԱ-ի պաշտոնական ակումբային մրցաշարերին:

Այժմ, երբ ավարտված է նախորդ փուլը, կարելի է արձանագրել, որ այն հաջող ընթացավ եւ ապացուցեց արտոնագրման համակարգի կենսունակությունը: Այս անգամ արտոնագրման ընթացակարգերն անցան ՀՀ ազգային առաջնության բարձրագույն խմբում հանդես եկող թիմերի մայր-ակումբները: Դա թույլ տվեց նրանց ծանոթանալ համակարգին եւ նրա յուրահատկություններին, ինչպես նաեւ գիտակցել դրա կարեւորությունը հայկական ֆուտբոլի զարգացման համար:

ՀՖՖ-ին դա թույլ տվեց առավել հանգամանորեն ծանոթանալ այսօր Հայաստանի ակումբներում տիրող իրավիճակին, նրանց կառավարման մեխանիզմներին, վարչական եւ այլ ռեսուրսներին, աշխատակազմերի ունակություններին եւ հնարավորություններին: Դրա շնորհիվ ընձեռվեց հնարավորություն՝ օժանդակել ակումբներին որոշակի թերությունների վերացման հարցում, բայց այդ գործընթացը շարունակական է եւ, իհարկե, կպահանջի որոշակի ժամանակ: Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան լի է վճռականությամբ՝ կատարելու այդ աշխատանքները եւ նույնն ակնկալում է ակումբներից եւ ողջ ֆուտբոլային հասարակությունից:

Անցյալ մրցաշրջանը յուրահատուկ էր նաեւ նրանով, որ ՈԻԵՖԱ-ի Գործադիր կոմիտեն հաստատեց իր արտոնագրման համակարգի նոր Ուղեցույցը (տարբերակ 2.0), որը հիմնված է ՈԻԵՖԱ-ի եւ բոլոր 52 անդամ-

Ֆեդերացիաների 2-ամյա փորձի վրա եւ որը ուժի մեջ կմտնի 2008/2009թթ. մրցաշրջանից: Ըստ այդմ, զգալիորեն խստացվում են ՈՒԵՖԱ-ի պահանջները ակումբների նկատմամբ:

Հենց դա էր պատճառներից մեկը, որ ՀՖՖ-ն կազմակերպեց սեմինար, որին հրավիրվեցին եւ մասնակցեցին ՈՒԵՖԱ-ի Արտոնագրման բաժնի ներկայացուցիչները:

Այն հետապնդում էր եւս մեկ նպատակ՝ ցույց տալ, որ համակարգը կրում է ոչ թե լոկալ, այլ համաեվրոպական բնույթ:

Ավելորդ չէ հիշեցնել, որ նախորդ մրցաշրջանում ՀՖՖ Արտոնագրման բաժինը արժանացավ ՈՒԵՖԱ-ի կողմից ստուգումներ կատարելու լիազորություններ ստացած շվեյցարական հեղինակավոր “SGS” ընկերության որակի հավաստագրին, ինչը պարզորոշ վկայում է բաժնի աշխատանքների եւ մատուցված ծառայությունների բարձր որակի մասին:

Հենց այդ պատճառով արտոնագրային նոր մրցաշրջանում Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան անելու է ամեն ինչ՝ իր աշխատանքների որակն էլ ավելի բարձրացնելու համար, ունենալով հետեւյալ նպատակային խնդիրները.

- ՈՒԵՖԱ-ի Ուղեցույցի տեղայնացում եւ աշխատանքային խմբի ստեղծում
- ՀՖՖ Ուղեցույցի հաստատում ՈՒԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեների կողմից (մինչեւ 2006թ. վերջը)
- ՀՀ ազգային առաջնության բարձրագույն խմբում հանդես եկող թիմերի մայր-ակումբների լիովին ներգրավում արտոնագրման գործընթացում
- օժանդակում ակումբներին՝ նրանց մարզչական, վարչական եւ տեխնիկական բնագավառներում երիտասարդ, տաղանդաշատ եւ փորձառու կադրերի ներգրավման հարցում
- ֆուտբոլային մարզակառույցների արդիականացմանն ուղղված աշխատանքներ, որոնց շնորհիվ դրանք կդառնան հնարավորինս անվտանգ եւ հարմարավետ
- ակումբների հայտերի արդյունավետ եւ ժամանակին քննարկման ապահովում
- ԶԼՄ-ների հետ կապերի հստակեցում եւ բարելավում
- “SGS” ընկերության հավաստագրային ընթացակարգի հաջող մասնակցություն 2006 թ-ին:

Այս խնդիրների իրականացումը եւս մեկ անգամ աստիճանով կբարձրացնի մեր ֆուտբոլի որակը: Այո, առայժմ մեր ազգային եւ ակումբային թիմերն ի վիճակի չեն մրցելու եվրոպական առաջատար թիմերի հետ թե ֆինանսական ներդրումների, թե մարզական ցուցանիշների առումով, բայց մենք կարող ենք եւ պարտավոր ենք գործնական կարգապահությամբ եւ կատարած աշխատանքների որակով հավասարվել նրանց հետ արդեն իսկ այսօր:

Մրցաշրջանի ընթացքում ՀՖՖ Արտոնագրման բաժինն ակումբներին կտեղեկացնի անհրաժեշտ գործողությունների մասին՝ տրամադրելով ինչպես համապատասխան փաստաթղթեր (Ուղեցույցեր, բացատրական նամակներ եւ այլն), այնպես էլ ընդհանուր եւ անհատական խորհրդատվություններ:

Միաժամանակ Արտոնագրման բաժինն ու ՀՖՖ Մամուլի քարտուղարությունն օպերատիվ կերպով ակումբներին եւ ողջ ֆուտբոլային հանրությանը կտեղեկացնեն Հայաստանի եւ ողջ Եվրոպայի արտոնագրային համակարգի նորություններին: Եվ ես կոչ եմ անում Հայաստանի լրատվամիջոցների ներկայացուցիչներին եւ, մասնավորապես, մարզական լրագրողներին, հանրությանը հնարավորինս բովանդակալիորեն իրազեկել համակարգի նորությունների եւ զարգացումների մասին:

Կցանկանայի կրկին ընդգծել, որ արտոնագրման համակարգի իրականացումը չի սահմանափակելու մեր ակումբների գործունեությունը: Հակառակը, այն կանոնակարգելու է այն եւ ամուր հիմքեր է դնելու մեր ակումբների եւ ֆուտբոլի՝ որպես մարզաձեւի շարունակական զարգացման համար՝ ի ուրախություն այս Մեծ Խաղի մասնակիցների եւ երկրպագուների:

Հենց այդ պատճառով ես ակնկալում եմ բոլոր շահագրգիռ կողմերի աջակցությունն ու միահամուռ աշխատանքն այս ծրագրի իրականացման եւ ամրապնդման գործում, ինչի շնորհիվ քայլ առ քայլ կզարգանա Հայաստանի ֆուտբոլային ընտանիքը:

ՀՖՖ նախագահ

Ռուբեն Հայրապետյան